

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԲԵՄԱԿԱՆԲ

Կիր. 24 Նոյ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյ մէջ: Ժամարարը եւ Բարոզիչն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան: Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ հոգեհանգիստ, երեսաղէմի Հայոց Բարեւսիրական Միութեան անդամ, անդամուհիներուն համար: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Եր. 30 Նոյ.- Առաջնոցն Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիսաղիր: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Կիր. 1 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարուբին, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արդ. Զաւարեան:

Գշ. 3 Դեկտ.- Նախատօնակին ի Ս. Զակոր հանդիսապետեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Դշ. 4 Դեկտ.- Ընծայումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեքսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուցելու Բարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Բարերար Կիլլայի Կիլլալէկեանի եւ իր գերդաստանի ննջեցելոց համար կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն:

Եր. 7 Դեկտ.- Զբոսը Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Մինասի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան:

Կիր. 8 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աջակողմեան Ս. Զովհաննէս-Կարապետ Սեղանին վրայ: Ժամարարը եւ Բարոզիչն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ուր. 13 Դեկտ.- Նախատօնակին ի Ս. Զակոր հանդիսապետեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Եր. 14 Դեկտ.- Առաջնոցն Թադէոսի եւ Բարքուզիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիսաղիր: Ժամարարն էր Տ. Համարձուժ Վրդ. Քէշիշեան:

Կիր. 15 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարուբին, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս

Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Բագրատ Արդ. Պուրնէֆեան:

Եր. 21 Դեկտ.- Արքայն Նիկողայոսի Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Մակարայ Մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աբաջանեան:

- Նախատօնակին ի Ս. Զակոր նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 22 Դեկտ.- Զգուքին Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Սեւան Եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեքսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուցելու Սեւան Եպս. Ղարիպեան:

Ուր. 27 Դեկտ.- Նախատօնակին ի Ս. Զակոր նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Եր. 28 Դեկտ.- Ա. Զակորայ Մծբնայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիսաղիր: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան: Վերաբերումը կատարուեցաւ Մայր Տաճարի դասին մէջ Սուրբին նկարով կառուցուած շարժական սեղանին վրայէն:

Կիր. 29 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարուբին, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բարսիսեան:

Եր. 4 Յուն.- Ա. Բարսեղի Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիսաղիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Զովհաննիսեան:

Կիր. 5 Յուն.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտօնած Աւագ Տօներու առաջին հանդիսաւոր նախատօնակին, որմէ ետք Միաբանութիւնը Ս. Արքայ «Օրհնեցէ՛ք զՏէր» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարհարան:

Բշ. 6 Յուն.- Ա. Դաւթի Մարգարէին եւ Զակորայ Տեառնեղբօր: (Տօն Առաքելական Ս. Արքայի երեսաղէմի):

- Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան ընթացքին Պատրիարք Սրբազան Հայրը, շուրջաւ եւ եմփորոն զգեցած բարձրացաւ

Տեղանկերը Արոտի պատուանդանին ուր մնաց մինչև ժամերգութեան աւարտիլը, եւ ընդունեց Միաբանութեան եւ դպիրներուն շնորհատութիւնները:

Լուսարարապետ Տ. Նուրիան Արք. Մանուկեան «Քրիստոս Աստուած մեր» մաղրանքի ընթացքին մասնաւոր բարեմաղրութիւններ ըրաւ Նորին Ամենապատուութեան բարօր կենաց համար:

- Օրուան Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան: «Հայր Մեր»էն առաջ Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ս. Արոտոյս հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին:

- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտում Ս. Ստեփանոսի նախատօնակին: Տօնին բուրվառակիւր հայրերն էին Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան եւ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Գշ. 7 Յուն.- Արքայն Ստեփանոսի նախասարկաւագին եւ Առաջին Մարտիրոսին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին, Ս. Արոտոյս Բարեշնորհ Սարկաւագները եւ ուրարակիրները, եւ երկու բուրվառակիւր վարդապետները, մարգարտագարդ սաղաւարտներով եւ տապանակ ու բուրվառ ի ձեռնին, կատարեցին «Սարկաւագաց Հանդէս»ը: Արարողութեան նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւանդատան մէջ Ս. Ստեփանոսի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արք. Աթաշեան:

- Գիշերասկիզբին ժառանգաւորաց Վարժարանի ճաշարանին էջ տեղի ունեցաւ Միաբանական ընթրիք՝ Սարկաւագաց Տօնին առթիւ: Խօսք առին Տիար Սուրեն Արքահամեան, երկու բուրվառակիւր վարդապետներն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան, ուսուցչական կազմին կողմէն Տիար Եղիա Տիգրանեան. Պատրիարք Սրբազանը ըրաւ իր փակման խօսքը եւ հանդէսը վերջացաւ «Պահպանիչ»ով:

Գշ. 8 Յուն.- Գլխաւոր Առաքելոց նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Եշ. 9 Յուն.- Ս. Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի: Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատարան մէջ Ս. Պատարագը մատոյց Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Ուր. 10 Յուն.- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը «Հրաշափառ»ով մուտք գոր-

ծեց Մայր Տաճար, ուր Որդւոց Որոտման տօնի հանդիսաւոր նախատօնակին նախագահելէ ետք, Ս. Արոտոյ «Որ էնն յէութեան» շարականի երգեցողութեամբ Միաբանութիւնը բափօրով բարձրացաւ Պատրիարքարան:

Եր. 11 Յուն.- Տօն Արքայն Որդւոցն Որոտման: Մայր Տաճարի Ս. Գլխաղորի մատարան մէջ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Պատրիարք Սրբազան Հայրը: Աղըներակայ վարդապետներն էին Տ. Աւետիս Արք. Իփրանեան եւ Տ. Բագրատ Արք. Պորենէեան: Բուրվառակիւր վարդապետներն էին Տ. Թէոդորոս Արք. Զաֆարեան եւ Տ. Ղեւոնդ Արք. Յովհաննիսեան:

Պատրիարք Սրբազան Հայրը ամպիտօնիկ տակ Ս. Խաչափայտի մասունք ի ձեռնին, նախագահեց եռաղարձ մեծահանդէս բափօրին: Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը բափօրով Ս. Արոտոյ «Որ էնն էութեան» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան:

Պատրիարք Սրբազան Հայրը, օրհնուած ճշխար բաժնեց բոլորին, փակելով շարքը Աւագ Տօներուն:

Կիր. 12 Յուն.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արք. Զաֆարեան:

Բշ. 13 Յուն.- Իրիկնաղէմին, Պատրիարք Սրբազան Հայրը եւ Միաբանութիւնը ներկայ եղան ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցած «Կաղանդ»ի հանդէսին:

Գշ. 14 Յուն.- Կաղանդ. Նոր Տարի. ըստ Հին Տոմարի: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց ժամօրհնող Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը բարձրացան Պատրիարքարան, երգելով Ս. Արոտոյ Մաղիքերը:

Ս. Թարգմանչաց Վարժարանի սաներ ծաղկեփունջ ի ձեռնին, գողտրիկ ուղերձ մը արտասանեցին, Պատրիարք Սրբազան Հօր հայցելով արեւշատութիւն եւ Սուրբ Երկրին խաղաղութիւն:

Նորին Ամենապատուութիւնը ըրաւ իր պատշաճ խօսքը եւ բաժնեց նարինջ:

- Նոյն առաւօտուն Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արք. Յովհաննիսեան: Պատարագէն ետք ներկաները բարձրացան Պատրիարքարան:

Շր. 18 Յուն.- Ճրագալոյց Ա. Մենդեան:
Առաւօտուն ժամը 9.30ին ընդհանուր
ոստիկանապետը, երուսաղէմի ոստիկանապետը
և Հին Քաղաքի պատասխանատու ոստիկաններ,
Պատրիարք Սրբազանին այցելեցին Մենդեղը
շնորհաւորելու և ղէպի Բերդեհէմ բափօրին
հսկողութեան համար: Ժամը 10ին Պատրիարք
Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը
ինքնաշարժերու շարանով մը նամբայ ելաւ ղէպի
Բերդեհէմ: Ժամրու կիսուն Յունաց Ա. եղիա
վանին առջեւ ղիմաւորելու եկած էին
Պէյր-Սահուրի և Պէյր-Ճալայի բաղապետները
և պետական ներկայացուցիչներ: Քաղաքի
մուտին, ինքնաշարժներէն դուրս ելլելով,
Պատրիարք Սրբազանը և Միաբանութեան
անդամները յառաջացան մինչեւ հրապարակ:

Բերդեհէմի հրապարակին վրայ
ղիմարուելով Բերդեհէմի կառավարիչէն,
ընդհանուր ոստիկանապետէն, բաղապետէն և
պաշտօնատարներէն: «Խորհուրդ Մեծ» շարականի
երգեցողութեամբ բափօրը բարձրացաւ Մենդեան
Տանարի Հայկական վանքը:

Յետ միժօրէի ժամը 2-ին Պատրիարք
Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշա-
փառ»ով մուտք կատարուեցաւ Ա. Մենդեան
Տանար և Ա. Այր: Ծրագալոյցի Ա. Պատարագը
Ա. Այրին մէջ մատոյց Տ. Աւետիս Արդ.
Իփրանեան: Ապա՝ Միաբանութիւնը բարձրացաւ
Հայոց Վանք: Բակին մէջ կարդացուեցաւ Ա.
Մենդեան Աւետարան և երգուեցաւ «Փառք ի
բարձունս»:

Կիր. 19 Յուն.- Տօն Մենդեան և
Աստուածայայտութեան: Կէս գիշերէն առաջ
ժամը 10ին, Գիշերային պաշտամունքէն յետոյ,
Միաբանութիւնը կ'իջնէ Ա. Մենդեան այր, ուր
կը շարունակուի «Փառք ի բարձունս»ի
երգեցողութիւնը: Պաղեստինեան կառա-
վարութեան ներկայացուցիչներ ներկայ եղան,
և աւարտին, Պատրիարք Սրբազան Հօր Մենդեան
Հայերէն և Անգլերէն պատգամներէն յետոյ
մեկնեցան, շնորհաւորելով Պատրիարք Սրբազան
Հայրը: Պաշտամունքները շարունակուեցան
Տանարին մէջ: Պատրիարք Սրբազան Հայրը և
Լուսարարապետ Սրբազանը վերադարձան
երուսաղէմ:

Աւագ Սեղանին վրայ պատարագեց Տ.
Նորայր Արդ. Գագագեան: Զօրօհնէֆի
արարողութեան հանդիսապետեց Տ. Սեւան Եպս.
Ղարիպեան:

Ա. Մենդեան Այրին մէջ պատարագեց Տ.
Սեւան Եպս. Ղարիպեան: Պաշտամունքներու

աւարտին, առաւօտեան ժամը 6ին Միաբանութիւնը
բափօրով և երգեցողութեամբ կը բարձանայ
Հայոց վանք, կը կարդացուի Ա. Մենդեան
Աւետարանը և կ'երգուի «Փառք ի բարձունս»:
Միաբանութիւնը կը վերադառնայ երուսաղէմ:

- Երուսաղէմի մէջ Ծրագալոյցի
արարողութիւն կը կատարուի Ա. Յարութեան
Տանարին մէջ: Ա. Գերեզմանին վրայ կը
պատարագէ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:
Նախատօնակին կը հանդիսապետէ Տանարին
Տեսուչը Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան:
Արարողութիւնները կ'աւարտին Տանարին
Տեսչարանին մէջ:

- Առաւօտեան, Ա. Յակոբեանց Մայր
Տանարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Տ.
Համբարձում Վրդ. Քէշիշեան «Զօրօհնէֆի
արարողութեան հանդիսապետեց Տ. Պարէտ Մ.
Վրդ. Երէցեան:

- Շաբաթ առաւօտ, Բերդեհէմ մուտքին,
սկաւառական նուագախումբերը զանց առնուած
էին: Իսկ Պէյր Ճալայի և Պէյր Սահուրի
սահմանագլուխներուն շրջափակման պատճա-
ռաւ նուագ էր բազմութիւնը: Մասնաւոր
հանրակառուով Եաֆայի շրջանէն ուխտաւորներ
մասնակցեցան պաշտամունքին:

Բշ. 20 Յուն.- Յիշատակ Մեծերը: Մայր
Տանարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց
Աւագ Թարգման Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:
Հոգեհանգստեան կարգին հանդիսապետեց Տ.
Սեւան Եպս. Ղարիպեան:

Շր. 25 Յուն.- Ա. Պատարագը մատուցուե-
ցաւ Մայր Տանարի Ա. Աստուածածնայ խորանին
վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ.
Մանկասարեան:

- Նախատօնակին ի Ա. Յակոբ Նախագահեց
Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 26 Յուն.- Տօն Անուանակոչութեան
Տեառն: Առաւօտուն Պատրիարք Սրբազան Հօր
գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշա-
փառ»ով մուտք գործեց Ա. Յարութեան Տանար:
Օրուան հանդիսաւոր Ա. Պատարագը Քրիստոսի
Ա. Գերեզմանին վրայ մատոյց և բարոգեց
Լուսարարապետ Սրբազան Հայրը:

- Դէպի վանք դարձին Հայոց բաղի
մուտքէն Միաբանութիւնը «Լոյս ի Լուսոյ»
շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարանի
դահլիճը: Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց
«Տնօրհնէֆի» արարողութեան, որ կրկնուեցաւ
վարդապետաց սեղանատան մէջ: Պատրիարք
Սրբազանը նարինջ բաժնեց ներկաներուն:

- Նախատօնակին ի Ա. Յակոբ Նախագահեց
Պատրիարք Սրբազան Հայրը:

Բշ. 27 Յուն.- Տօն Մենդեան Ա. Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Յովհաննէս-Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Համարձում Վրդ. Քէշիշեան:

Շր. 1 Փետր.- Արքեպ. Թադէոսի Թագաւորին եւ Եօթն մանկանցն եփեսոսի:

Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Արաջանեան:

Կիր. 2 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարը եւ Բարոզիչն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Շր. 8 Փետր.- Արքեպ. Հայրապետացն Աթանասի եւ Կիրզի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Կիր. 9 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարը եւ Բարոզիչն էր Տ. Պարէտ Մ. Վրդ. Երէցեան:

Շր. 15 Փետր.- Արքեպ. Գրիգորի Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

Կիր. 16 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ծախակողմեան դասին մէջ գտնուող Ա. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Դուսան Վրդ. Այնանեան:

Ս. Էշմիա ծնի 1700-ամեակի հիմնադրութեան առթիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Կաթողիկոսին ուղարկած կոնդակը ընթերցաւ Ս. Պատարագի ընթացքին, Տ. Թէոդորոս Արդ. Զաւարեան:

Ուր. 21 Փետր.- Նախատոնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Շր. 22 Փետր.- Ա. Սարգսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա.

Սարգսի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Ըստ սովորութեան կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն հանգուցեալ ազգային րարերարներու Գալուստ ու Սարգիս Կիւլպէնկեաններու եւ համայն Կիւլպէնկեան գերդաստանի նշնեցեալներուն համար: Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը մինչեւ այսօր համաձայն վսեմաշուր հանգուցեալ Գալուստ Կիւլպէնկեան կտակին կը հոգան ծախսերը Կիւլպէնկեան Մատենադարանին՝ կրթական օժանդակներուն, մեր Սրբատեղեաց պաշտօնացեալ՝ առաջինը ըլլալով Ս. Յարութեան Տաճարը:

Նոյնպէս Կ. Պոլսոյ Ամենապատիւ Մեսրոպ Պատրիարք Մուրաֆեան Սրբազան Հայրը խնդրած է նուիրապետական Արտոններէն, որ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն կատարուի Կ. Պոլսոյ Պատրիարք երջանկալիշատակ Ամենապատիւ Տ. Շնորհի Արեւես. Գալուստեանի հոգիին համար, իր ծննդեան 90-ամեակի տարեդարձին առիթով: Նոյնպէս Ս. Արտոնը իր գահակալով եւ Միաբանութեամբ յիշատակել տուաւ իր Միաբաններէն հանգուցեալ Վաղարշ Եպս. Խաչատուրեանը եւ Տ. Վաչէ Մ. Վրդ. Ինգնատիոսեանը, անոնց մահուան տարելիցին եւ Բաղասունին առթիւ: Հոգեհանգստեան կարգերուն նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 23 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարը եւ Բարոզիչն էր Տ. Թէոդորոս Արդ. Զաւարեան:

Դշ. 26 Փետր.- Մանր տեղատարափ ծիւնին պատեառով Տեառնընդառաջի նախատօնակ եւ հսկում տեղի չունեցաւ:

Եշ. 27 Փետր.- Տեառնընդառաջ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց եւ Բարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Կիր. 26 Նոյ. 2002- Իսրայելի մէջ Միացեալ Նահանգներու լիազօր Հիւպատոս Բոնալտ Շըլի- չերին «Քարի Սրբ» մաղթելու առիթով կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Արիս Նպս. Ծիրվանեանի եւ Տ. Գուսան Վրդ. Ալեանեանի:

Բշ. 2 Դեկտ.- Երուսաղէմի քաղաքացիական Էհուտ Օլմէրքի հրաւերով, Իսլամական, Հրեական եւ Քրիստոնէական տոներու առիթով տրուած ընդունելութեան եւ մտավառութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Արիս Նպս. Ծիրվանեանի եւ Տ. Գուսան Վրդ. Ալեանեանի:

Կիր. 8 Դեկտ.- Երուսաղէմի Երրայական Համալսարանի Ափրիկէի եւ Ասիայի Ուսումնասիրութիւններու Ինստիտուտի Հայագիտութեան Ուսման կազմակերպութեամբ, նայմանուն համալսարանի մէջ տեղի ունեցաւ նորատիպ «Հայկական Հնագրութեան Ակում»-ի (գումնաւոր, մեծագիր, էջ 554) ցուցադրութիւնը: Ընդառաջելով Ակումի համահեղինակ եւ միեւնոյն առեւ Հայագիտութեան Ուսման վարիչ պրոֆ. Մայիլ Սթոնի հրաւերին, Պատրիարք Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ երեկոյթին, ընկերակցութեամբ Արիս Նպս. Ծիրվանեանի եւ նայմանուն համալսարանի ուսանող միաբան անդամներ Բագրատ Արդ. Պարմէնեանի, Էմմանուէլ Արդ. Արաբեանեանի, Նորայր Արդ. Գազազեանի եւ Իսահակ Արդ. Միմանեանի: Բացման խօսքով հանդէս եկաւ Ինստիտուտի նախագահ՝ պրոֆ. Ռուբէն Ամիրայ: Իրմէ ետք արտայայտուեցան նաեւ ՀՀ Պատույ հիւպատոս Յոյակ Մամեան եւ համալսարանի ռեկտոր Խայիմ Ռաբիմովիչ: Այնուհետեւ, գնահատական խօսքով ներկայացան Տէր. Սէրէօ Լա Բօրթա եւ պրոֆ. Մալախի Պէյր Արիէ: Պրոֆ. Մայիլ Սթոն մեծադիր Ակումի պաշտօնական յանձնումը կատարեց, օրինակներէն մէկը նուիրելով Պատրիարք Սրբազան Հօր, ինչպէս նաեւ իր քանդակով հրատարակուած «The Armenians in Jerusalem and the Holy Land» հատորը: Պատրիարք Սրբազան Հայրը իր փականաւ խօսքին մէջ գնահատանքով յիշեց կատարուած աշխատանքը, շնորհակալութիւն յայտնելով Երրայական Համալսարանի Հայագիտութեան Ուսման Բաժնի վարիչ Պրմ. Մայիլ Սթոնին, Միաբանութեան անդամներու եւ տրուած ուսման պատեհութեան համար: Եւ, Հայագիտութեան Ուսման Բաժնի գրադարանին նուիրեց Սրբոց Յակոբեանց Տպարանէն նորատիպ երեք հատորներ. *Տիգրան Սաւալանեանի*

«Պատմութիւն Երուսաղէմի», *Աստուածատուր Նպս. Յովհաննիսեանի* «Պատմութիւն Երուսաղէմի» եւ *Հագար Ճահկեցիի* «Աստուածաբանութիւն, Դրախտ Յանկալի»:

Բշ. 23 Դեկտ.- Առաւօտեան, Երուսաղէմի քրիստոնեայ համայնքներու կրօնապետները Մենդեան տօնակատարութիւններու նախօրեակին այցելեցին Պաղեստինեան Իշխանութեան նախագահ Նասրը Արաֆատին: Պատրիարք Սրբազան Հօր կ'ընկերանային Տ. Արիս Նպս. Ծիրվանեան եւ Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Ուր. 27 Դեկտ.- Կաթօլիկ եւ Բողոքական Եկեղեցիներու Ս. Մենդեան տօնին առիթով, Երուսաղէմի մէջ սկսուեցան շնորհաւորանքները:

Ս. Յակոբեանց Միաբանութիւնը գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, շնորհաւորութեան գնաց Ֆրանչիսկեան Կիւսքոսին, Լատինաց Ամեն. Պատրիարքին, ուր հաւաքուած էին միւս յարանուանութեանց եկեղեցական ներկայացուցիչներ եւ: Այնուհետեւ, Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Տ. Իսահակ Արդ. Միմանեանի շնորհաւորութեան գնաց Պապական Նուիրակին:

Բշ. 30 Դեկտ.- Իսրայելի նախագահ Մօշէ Բացալի կողմէ, ի պատիւ Քրիստոնեայ Համայնքներու կրօնապետներուն, նախագահական ապարանքին մէջ կազմակերպուած Նոր Տարուան հիւրասիրութեան մասնակցեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Արիս Նպս. Ծիրվանեանի, Տ. Սեւան Նպս. Ղարիպեանի եւ Տ. Գուսան Վրդ. Ալեանեանի:

Շր. 5 Յունուար 2003.- Դաւիթ Մարգարէի եւ Յակոբայ Տեառնեղոյայ Ռաֆելոյն տօնին առիթով, Պատրիարք Սրբազան Հօր հրաւերով, Ժառանգաւորաց վարժարանի Մեծ Սրահին մէջ կազմակերպուած հիւրասիրութիւն-ընթրիքին ընկերակցութեամբ Պաղեստինեան պետական անձնր, հիւպատոսներ եւ ներկայացուցիչներ, Երուսաղէմի Եկեղեցիներու կրօնապետներ ու կրօնական ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Հայկական կազմակերպութիւններու վարչութեան ատենապետներ, Պատրիարքարանի պաշտօնէական եւ ուսուցչական կազմը: «Քարիգալստեան» ուղերձով Պատրիարք Սրբազան Հայրը ողջունեց ներկաները, կոչ ընելով պետութեանց ղեկավարներուն եւ կրօնական համայնքներուն, հետամուտ ըլլալու Սուրբ Երկրին մէջ վերահաստատելու ապահով խաղաղութիւն եւ ժողովուրդներու համերաշխ համակցութիւն: Այնուհետեւ, տեղի ունեցաւ Ս. Յակոբեանց վանքի պատկերով Կարկանդակի արարողութիւնը: Աւելի ուշ, Ժամանակ Երուսա-

ղէմի քաղաքապետ Էհուտ Օլմերք, որ իր շնորհաւորութիւնը յայտնեց Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան: Այսպիսով, կը շարունակուի անցեալ տարի հաստատուած նոր աւանդութիւնը:

Բշ. 13 Յուն.- Ըստ Հին Տօմարի, Ամանորի նախընթաց երեկոյին ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահէն ներս տեղի ունեցաւ Ամանորի եւ Ս. Ծննդեան հանդէս, ժառանգաւոր սաներու մասնակցութեամբ: Տեսուչ Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երեցեանի րացման խօսքէն ետք, եղան արտասանութիւն եւ դաշնակի կատարում: Սեղմ յայտագիրը իր աւարտին մօտեցաւ Տէր եւ Տիկին Վալերի Փիրումեաններու ղեկավարութեամբ խմբական երգերու կատարմամբ: Պատրիարք Սրբազան Հայրը փակման խօսքին մէջ լատենտութիւն յայտնեց գալիք տարուան համար, խրախուսեց երիտասարդ ժառանգաւոր սաները Աստուծոյ կողմէ ստացած շնորհներու ցուցաբերումին համար, եւ իր օրհնութիւնը տուաւ ամէնուն: Հանդէսը վերջացաւ Տէրունական աղօթքի երգեցողութեամբ:

Ուշ երեկոյեան, Նոր Տարուան առիթով Պատրիարքարանի մէջ տեղի ունեցաւ աւանդական ընթրիք-խրախմբանք, մասնակցութեամբ Միաբան Հոգեւոր Հայրերուն:

Կէսգիշերային զանգակահարութեան աւանդութիւնը տեղի ունեցաւ Վանքի Մեծ Բակին մէջ, ուր հաւաքուած քաղմութիւն կար: Հնչեցին Մայր Տաճարի մեծ զանգերը. ժառանգաւորաց սաներուն կողմէ «Փառք ի բարձունս» երգի եւ Ծննդեան շարականներու երգեցողութեամբ աւետուեցաւ Աւանդական Նոր Տարւոյ մուտքը: Տ. Գուսան Վրդ. Ալեանեան խաղաղութեան պատգամով դիմեց ներկաներուն, եւ մաղթեց որ Աստուած զօրացնէ համակեցութեան եւ հանդուրժողութեան ոգին Ս. Երկրին քնակչութեան, եւ վերջ տրուի արիւնահեղութեան:

Եշ. 16 Յուն.- Հայոց Ս. Ծննդեան տօնի նախօրեակին, շնորհաւորութեան համար Պատրիարքարան այցելեցին Իսրայէլի պետական ներկայացուցիչներն ու ռուսականները, գլխաւորու-

քեամբ Կրօնից Նախարարութեան Քրիստոնէական բաժնի պատասխանատու Սէզար Մարչիի:

Ուր. 17 Յուն.- Հայոց Ս. Ծննդեան տօնի նախօրեակին, կէսօրէ ետք Ս. Յակոբեանց Միաբանութիւնը գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, այցելեցին Պաղեստինեան Կառավարութեան նախագահ Նասրը Արաֆատին Ռամալլայի իր կայանին մէջ, ուր եղան շնորհաւորական խօսքեր:

Դշ. 21 Յուն.- Հայոց Ս. Ծննդեան տօնի առիթով Պատրիարքարան շնորհաւորանքի եկան Յունաց եւ Լատինաց Ամեն. Սրբազան Պատրիարքները, եւ Ֆրանչիսկեան Քուստոս, իրենց անդամներով, եւ Կաթոլիկ եւ Բողոքական, Հայէշ, Դպտի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ:

Դշ. 22 Յուն.- Յունուար 19-26, Աղօթքի Ծառք էր Քրիստոնէական Միութեան: «Հոգեւոր գանձ կաւէ կուծերու մէջ» (Ք. Կորնթ. 4:1-18) խորագիրը կրող յատուկ կրօնական պաշտամունք տեղի ունեցաւ Երուսաղէմի ուրբ տարբեր յարանուանութեանց եկեղեցիներու մէջ:

Զորեքշաբթի, 22 Յունուարին, կէսօրէ ետք ժամը 5ին, Էփիմեոնիկ արարողութիւնը տեղի ունեցաւ Ս. Յակոբեանց Մայր տաճարին մէջ, կարգադրութեամբ Արտաֆին եւ Էփիմեոնիկ Յարաբերութիւններու գրասենեակի պատասխանատու Տ. Արիս Նպս. Ծիրվանեանի:

Այնուհետեւ, միասնական աղօթքին ներկայ եկեղեցական եւ աշխարհական ներկայացուցիչներ հիւրասիրուեցան ժառանգաւորաց փոքր սրահին մէջ:

Դշ. 12 Մարտ.- Երուսաղէմի առժամայ քաղաքապետ Ուրի Լուփիանսքիի կողմէ նախկին քաղաքապետ Էհուտ Օլմերքին (ներկայիս՝ Փոխվարչապետ եւ Նախարար՝ Արդիւնաբերութեան, Առեւտրի եւ Աշխատանքի) «Բարի Երբ» մաղթելու առիթով կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Արիս Նպս. Ծիրվանեանի: